Ոչ պաշտոնական թարգմանություն

Արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում Ուկրաինայի քաղաքացի երեխաների միջպետական որդեգրման գործողությունների իրականացման անթույլատրելիության մասին

Բաց դիմում այն պետությունների կառավարություններին, դեպի ուր տարհանվում են Ուկրաինայի քաղաքացի երեխաները՝ կապված Ռուսաստանի Դաշնության կողմից Ուկրաինա ռազմական ներխուժման հետ

Դավաճանական ռազմական ներխուժումը Ուկրաինա և ագրեսոր պետության շարունակական զինված հարձակումները ուկրաինական քաղաքների և գյուղերի խաղաղ բնակչության վրա հանգեցրել են անդառնալի կորուստների և հսկայական թվով քաղաքացիական անձանց, այդ թվում՝ երեխաների զոհերի: Ուկրաինայի բազմաթիվ քաղաքացիներ ներկայումս գտնվում են այնպիսի պայմաններում, որը սպառնում է նրանց կյանքին և առողջությանը: Աճում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, և այն երեխաների թիվը, որոնց կապը ծնողների և այլ հարազատների հետ ժամանակավորապես կորել է:

Ուկրաինացիների և Ուկրաինայում բնակվող այլ պետությունների քաղաքացիների կյանքին և առողջությանը սպառնացող անչափելի վտանգների պատճառով Ուկրաինայի իշխանությունները, համաձայն «Ռազմական դրության մասին» Ուկրաինայի օրենքի, ապահովում են երեխաների և երեխաներ ունեցող ընտանիքների տարհանումը Ուկրաինայի տարածքում գտնվող անվտանգ վայրեր, ինչպես նաև արտերկրներ, ներառյալ՝ Եվրամիության անդամ երկրներ:

Ուկրաինայի կառավարությունն իր անկեղծ երախտագիտությունն է հայտնում բոլոր այն պետություններին, որոնք ներկայումս ապաստան են տրամադրում ուկրաինացի երեխաներին և երեխաներ ունեցող ընտանիքներին, անհապաղ և ուշադրությամբ ապահովում նրանց հիմնական կարիքները, պաշտպանում նրանց իրավունքները և շահերը և կազմակերպում նրանց համար ապահով միջավայր: Նման օգնությունը չի կարելի գերագնահատել, և ուկրաինացի ժողովուրդը շնորհակալություն է հայտնում բոլոր բարեկամ ժողովուրդներին զգայունության, մարդասիրության և համակողմանի օգնության համար:

Այնուամենայնիվ, ուկրաինական բնակավայրերից մեծ թվով երեխաների, ներառյալ առանց ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների ուղեկցությամբ հեռանալու պատճառով, մեծանում է եղբայրների և քույրերի բաժանման, անօրինական տեղաշարժերի և օտարերկրացիների ընտանիքներում կամ արտասահմանում բնակվող Ուկրաինայի քաղաքացիների ընտանիքներում նման երեխաների անօրինական տեղավորման վտանգը: Մասնավորապես առկա է ուկրաինացի երեխաների որդեգրման վտանգ՝ առանց պահպանելու ուկրաինական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը:

Ուկրաինայի կառավարությունը տեսնում է կյանքը փրկելու նպատակով արտերկիր տարվող երեխաների իրավունքների ոտնահարման ռիսկեր, առաջին հերթին ծնողների, մերձավոր ազգականների կողմից նրանց դաստիարակության, քաղաքացիության և ծագման երկրում բնակության տեսանկյունից:

Ընդգծելով վերը նշվածը և հավատարիմ մնալով ազգային օրենսդրության դրույթներին, մենք պաշտոնապես հայտարարում ենք, որ Ուկրաինայի քաղաքացի երեխաների միջպետական և ազգային որդեգրման ընթացակարգերը չեն կարող

իրականացվել որևէ երկրում՝ Ուկրաինայում գործող ռազմական դրության ընթացքում:

Ուկրաինայի կառավարության այս դիրքորոշումը ձևավորվել է՝ հաշվի առնելով հետևյալը. ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) որդեգրման քաղաքականությունն այն է, որ արտակարգ իրավիճակների պատճառով այլ երկրներ տարհանված երեխաները, այդ թվում՝ փախստականի կարգավիճակ ստացած այլ երկրներում գտնվող երեխաները չեն կարող որդեգրվել, քանի որ մեծամասամբ նրանք որբ չեն կամ իրենց որբության պաշտոնական հավաստի ապացույցներ չկան, և նման իրավիճակներում նրանք կարիք ունեն համապատասխան ժամանակավոր խնամքի՝ իրենց ընտանիքներին վերամիավորվելու, այլ ոչ թե որդեգրման համար: Նման երեխաների ինչպես ծագման, այնպես էլ բնակության երկրների զգալի և արդյունավետ ջանքերը պետք է ուղղված լինեն յուրաքանչյուր այդպիսի երեխայի ընտանիքի անդամներին գտնելուն, յուրաքանչյուր այդպիսի երեխային իր ընտանիքի հետ վերամիավորելուն և միայն այն դեպքում, եթե դա հնարավոր չէ, նրան երեխայի կարգավիճակ տալուն, որը կարող է որդեգրվել: Եվ պետք է հիշել, որ նման երեխաների որդեգրման ընթացակարգը կարող է իրականացվել միայն Ուկրաինայի օրենքներով և միայն խաղաղ պայմաններում:

Սա համահունչ է ՄԱԿ ՓԳՀ-ի քաղաքականությանը, ըստ որի որդեգրումը չի կարող տեղի ունենալ, եթե. այն ժամանակահատվածը (առնվազն երկու տարի) դեռ չի անցել, որի ընթացքում ձեռնարկվել են բոլոր հնարավոր միջոցները երեխայի ողջ մնացած ծնողներին և ընտանիքի այլ անդամներին որոնելու համար, եթե երեխայի վերադարձը ծագման երկիր ապահովության և արժանապատվության պայմաններում շուտով հնարավոր է թվում, և ծագման երկրում հետագա տեղավորման տարբերակները հոգեբանական և մշակութային կարիքների տեսանկյունից ավելի լավն են, քան որդեգրումը ապաստանի կամ երրորդ երկրում:

Բացի այդ, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 21-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն, մասնակից պետությունները, որոնք ճանաչում և (կամ) թույլատրում են որդեգրման համակարգի ընդունումը, պետք է ապահովեն, որ երեխայի լավագույն շահերը պահպանվեն. մարմինները որոշումներն ընդունեն գործող օրենքներին ու ընթացակարգերին համապատասխան և համապատասխան և հավաստի տեղեկատվության հիման վրա՝ ապահովելով, որ որդեգրումը թույլատրելի է՝ հաշվի առնելով երեխայի կարգավիճակը՝ կապված ծնողների, հարազատների և օրինական խնամակալների հետ, և որ, անհրաժեշտության դեպքում, համապատասխան անձինք տան իրենց տեղեկացված համաձայնությունը որդեգրման վերաբերյալ ցանկացած խորհրդակցության հիման վրա, որը կարող է անհրաժեշտ լինել:

Ուկրաինայի օրենսդրության համաձայն՝ երեխա որդեգրելու որոշումը կայացնում է դատարանը: Ուկրաինայից դուրս բնակվող ուկրաինայի քաղաքացիների և օտարերկրացիների կողմից ուկրաինացի երեխաների որդեգրումը պահանջում է Ուկրաինայի ազգային սոցիալական ծառայության համաձայնությունը, որը երեխաների որդեգրման և իրավունքների պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունն իրականացնող կենտրոնական գործադիր մարմինն է:

Ռազմական դրության սահմանման և Ուկրաինայի գործող օրենսդրությանը լիովին համապատասխանելու անկարողության պատճառով Ազգային սոցիալական ծառայությունը ներկայումս չի քննարկում Ուկրաինայի սահմաններից դուրս բնակվող Ուկրաինայի քաղաքացիների և

օտարերկրացիների կողմից երեխաների որդեգրման դեպքերը և թույլտվությունների տրամադրման հարցերը:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 11-րդ հոդվածը, որը վերաբերում է մասնակից պետությունների պարտավորություններին միջոցներ ձեռնարկել պայքարելու արտասահման երեխաներին ապօրինի տեղափոխելու և չվերադարձնելու դեմ, Ուկրաինայի կառավարությունը խնդրում է.

• ապահովել Ուկրաինայի քաղաքացի երեխաների՝ արտասահման տեղաշարժի նկատմամբ վերահսկողությունը՝ նրանց ցուցաբերելով անհրաժեշտ օգնություն.

• կանխել արտասահման տարհանված եղբայրների և քույրերի բաժանումը՝ նրանց հետագա ժամանակավոր տեղավորման մասին որոշում կայացնելիս.

• անհրաժեշտության դեպքում աջակցել Ուկրաինայից արտերկիր տեղափոխված յուրաքանչյուր երեխայի գտնվելու վայրի պարզմանը.

• տեղեկացնել Ուկրաինայի հյուպատոսական հիմնարկներին և դիվանագիտական ներկայացուցչություններին, առանց իրենց ծնողների և այլ օրինական ներկայացուցիչների ուղեկցության Ուկրաինայի քաղաքացի երեխաների մասին

• միջոցներ ձեռնարկել ուկրաինացի երեխաների թրաֆիքինգի կանխարգելման նպատակով.

- կանխել երեխաների որդեգրումը արտասահմանում բնակվող Ուկրաինայի քաղաքացիների և օտարերկրացիների կողմից՝ Ուկրաինայում ռազմական դրության ընթացքում:

Իրավիճակի փոփոխության դեպքում Ուկրաինայի միջպետական և ազգային որդեգրման իրավասու մարմինների գործունեության մասին տեղեկատվությունը անհապաղ կհայտնվի այն երկրների կառավարությունների ուշադրությանը, որտեղ տեղափոխվել են ուկրաինացի երեխաները՝ Ռուսաստանի կողմից Ուկրաինա ռազմական ներխուժման պատճառով:

Հարգանքով՝
Ուկրաինայի վարչապետ
Դենիս Շմիգալ